ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2014 թվականի N 385-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 1108-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. ***Նորիկ Վազգենի Հակոբյանին*** 2014 թվականի հոկտեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավան գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հոկտեմբերի 24
ք. Հրազդան